ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ----------2023թ. **N ---------- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ/Ա Ա-1 ԹԱՂԱՄԱՍԻ Հ. 134 ՇԵՆՔԻ Հ. 2 ԲՆԱԿԱՐԱՆԻ 1/8 ՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2023 թվականի ծրագրի վերաբերյալ» հ. 694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1 .Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Հ/Ա Ա-1 թաղամասի հ. 134 շենքի հ.2 բնակարանի 1/8 մասն անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Անահիտ Հակոբի Վարդանյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ/Ա Ա-1 ԹԱՂԱՄԱՍԻ Հ. 134 ՇԵՆՔԻ Հ. 2 ԲՆԱԿԱՐԱՆԻ 1/8 ՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Հ/Ա Ա-1 թաղամասի հ.134 շենքի հ.2 բնակարանի 1/8 մասն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Անահիտ Հակոբի Վարդանյանին:

Հ/Ա Ա-1 թաղամասի հ.134 շենքի հ.2 բնակարանի 1/8 մասը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 02.10.2023թ. հ.02102023-01-0291 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Հ/Ա Ա-1 թաղամասի հ.134 շենքի հ.2 բնակարանը աշխատավորների դեպուտատների Երևանի Շահումյանի շրջսովետի գործադիր կոմիտեի կողմից տրված 10.05.1979թ. հ.144241 օրդերի համաձայն՝ հատկացվել է Աղավնի Հակոբի Վարդանյանին և վերջինիս ընտանիքին՝ հարսին՝ Գոհար Սարգիսի Թադևոսյանին, թոռներին՝ Արփենիկ Հակոբի Վարդանյանին, Հայկ Հակոբի Վարդանյանին:

05.05.1994թ. Աղավնի Հակոբի Վարդանյանը մահացել է:

Շահումյանի շրջխորհրդի գործկոմի 14.07.1994թ. հ. 20/656 որոշմամբ քննարկվող բնակարանը սեփականաշնորհվել է Հակոբ Ալեքսեյի Վարդանյանի, կնոջ՝ Գոհար Սարգսի Թադևոսյանի, նրանց հինգ երեխաների՝ Հայկ Հակոբի Վարդանյանի, Արփենիկ Հակոբի Վարդանյանի, Մուշեղ Հակոբի Վարդանյանի, Սարգիս Հակոբի Վարդանյանի, Անահիտ Հակոբի Վարդանյանի և Ստեփան Շահենի Ստեփանյանի անվամբ: Ստեփան Ստեփանյանը եղել է Աղավնի Վարդանյանի փաստացի ամուսինը: Աղավնի Վարդանյանի մահից հետո Ստեփան Ստեփանյանը շարունակել է ապրել վերջինիս ընտանիքի հետ համատեղ: 1999թ. հուլիսի 6-ին Ստեփան Ստեփանյանը մահացել է: Նրա մահից հետո վերջինիս բաժնեմասը տիրապետել է Հակոբ Վարդանյանը և նրա կինը, իսկ ծնողների մահից հետո՝ նրանց երեխաները, հիմականում՝ Անահիտ Վարդանյանը, քանի որ մյուս երեխաները բնակվել են արտերկրում:

Ըստ «Տարոն» համատիրության կողմից տրված տեղեկանքի Անահիտ Վարդանյանը քրոջ՝ Արփենիկ Վարդանյանի և եղբոր՝ Մուշեղ Վարդանյանի հետ միասին բնակվում է քննարկվող բնակարանում:

Չնայած, ըստ անձնագրերի և վիզաների վարչության Մալաթիայի բաժանմունքի կողմից ներկայացված տեղեկանքի, Հայկ Հակոբի Վարդանյանը (1995թ.) և Սարգիս Հակոբի Վարդանյանը (2003թ.) հաշվառված են քննարկվող բնակարանում, սակայն բնակվում են արտերկրում: Մուշեղ Հակոբի Վարդանյանը մշտական հիմունքներով հաշվառված է քննարկվող բնակարանում 2004թ.-ից, իսկ Արփենիկ Հակոբի Վարդանյանը՝ 2002թ.-ից և Անահիտ Հակոբի Վարդանյանը 2017թ.-ից հաշվառված են այլ հասցեում, սակայն բնակվում են քննարկվող բնակարանում:

Միաժամանակ ընտանիքի բոլոր երեխաները նոտարական հայտարարությամբ հրաժարվել են մասնակցել քննարկվող բնակարանի 1/8-րդ մասի սեփականաշնորհման գործընթացին և համաձայնվել են, որ այն անհատույց օտարվի Անահիտ Վարդանյանին:

ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ քաղաքացի Անահիտ Հակոբի Վարդանյանի անվամբ ք. Երևան Հ/Ա Ա-1 թաղամասի 134 շենքի բն. 2 հասցեի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք, իսկ վերջին հինգ տարիների ընթացքում վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում կնքված անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ. 694-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ. 694-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**